# Ամփոփելով 2017 թվականը

4 ՏԱՐԻ ՄԻԱՍԻՆ

2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 7-ԻՆ

ԵՊՀ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԵՎ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ

ՏՈՆԵՑ ԻՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ 4-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԸ։

# ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ




2017 թվականի հունվար-հուլիս ամիսներին կենտրոնը Վորլդ Վիժն Հայաստան միջազգային բարեգործական կազմակերպության աջակցությամբ իրականացրեց ՛Սկեսուրների դերակատարումը և հղիության արհեստական ընդհատումները Հայաստանում՛ թեմայով հետազոտությունը: Իսկ սեպտեմբերին տեղի ունեցավ հետազոտության արդյունքների ներկայացումը:



2017 թվականի ընթացքում ԳՀԱԿ թիմը իրականացրել է նաև “Բանբեր Երևանի համալսարանի հասարակական գիտությունների հանդեսի բովանդակության վերլուծություն”՝ գենդերային և կանանց հիմնախնդիրներին անդրադարձի տեսանկյունից:

# ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

2017 թվականի մագիստրոսի գիտական աստիճաններ ստացան Հայաստանում առաջին և միակ՝ “**Կանայք, առաջնորդություն և զարգացում**” մագիստրոսական ծրագրի առաջին շրջանավարտները: Շրջանավարտների մագիստրոսական թեզերը հասանելի են կենտրոնի պատոնական կայքում:



ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

Գենդերային հետազոտությունների և առաջնորդության ԵՊՀ կենտրոնը (ԵՊՀ ԳՀԱԿ) հայտարարում է ընդունելություն կարճաժամկետ դասընթացների շրջանակներում: Ծրագրի նպատակն է տրամադրել համալիր գիտելիքներ և հմտություններ գենդերային հիմնահարցերով և կանանց հիմնախնդիրներով զբաղվող, ինչպես նաև հարակից գիտական ճյուղերում գործունեություն ծավալող սկսնակ և կայացած մասնագետներին, ովքեր հետաքրքրված են և/կամ աշխատանքային գործունեության բերումով առնչվում են գենդերային զգայունության ապահովման հարցերին թե հասարակական, թե պետական, թե մասնավոր սեկտորներում:

Դասընթացները կմեկնարկեն 2017 թվականի սեպտեմբերից: Դասընթացների տևողությունը 4-ից 6 շաբաթ՝ կախված դասընթացի բովանդակությունից և ծավալից, ինչպես նաև դիմորդների քանակից: Յուրաքանչյուր դասընթացավար իր ոլորտի պրոֆեսիոնալ ներկայացուցիչ է, ով ընտրվում է ըստ իր ոլորտում ունեցած գիտելիքի, փորձի, ինչպես նաև միջազգային մակարդակում ունեցած հաջողությունների և ձեռք բերած փորձի հիման վրա: Դասընթացավարները վերապատրաստվել են արտասահմանյան մի շարք ԲՈՒՀ-երում՝ Արիզոնայի պետական համալսարանում, Կանզասի, Օքսֆորդի համալսարանում, Կենտրոնական եվրոպական համալսարանում, ԱՄՆ Կալիֆորնիայի Բերկլիի, Վիեննայի և այլ համալսարաններում:

Դասընթացների արժեքը՝
30 000 – 90 000 ՀՀ դրամ:
Յուրաքանչյուր առանձին դասընթացի ավարտին տրվում է
ԵՊՀ ԳՀԱԿ վկայական:

Առկա է նաև ձկուն զեղչային համակարգ՝
ԵՊՀ ուսանողների համար - 20 % զեղչ
ԵՊՀ աշխատակիցների համար - 15 % զեղչ

Անհրաժեշտության դեպքում գործում են նաև կորպորատիվ փաթեթներ:

ԵՊՀ ԳՀԱԿ-ի կողմից առաջարկվում են հետևյալ դասընթացները

1. Գենդերային քաղաքականության մշակում և ներդնում
2. Գենդերային զգայուն բյուջետավորում և աուդիտ
3. Կանայք, բանակցություններ և խաղաղաշինություն
4. Արվեստ և ֆեմինիզմ/ Կանայք արվեստում
5. Միջմշակութային հաղորդակցություն և գենդերային խտրականություն
6. Բիզնես հաղորդակցություն կանանց համար
7. Ռազմավարական կառավարում ղեկավարների համար
8. Միգրացիոն գործընթացների գենդերային առանձնահատկությունները
9. Իրավական դաշտի գենդերային ուսումնասիրություն
   - Կանանց և գենդերային հիմնախնդիրներին վերաբերող հռչակագրերի և տեղական օրենսդրական իրավական ակտերի ուսումնասիրություն
   - Գենդերահեն իրավախախտումների դեպքում կանանց իրավունքների պաշտպանության պրակտիկա
   - Մարդու իրավունքները և գենդերային հիմնախնդիրները
10. Սոցիալական աշխատանք. ֆեմինիստական հեռանկարներ
11. Գենդերային հիմնախնդիրների հաղթահարումը հոգեբանության տեսանկյունից
12. Գենդերը սոցիոլինգվիստիկայի համատեքստում
13. Առաջնորդական ներուժի բացահայտում և կանանց առաջնորդության խթանում
14. Կառավարում (մենեջմենթ) և կանանց ձեռներեցություն
15. Մարքեթինգ. գովազդի առանձնահատկությունները կանանց և տղամարդկանց համար
16. Հայ կանանց պատմությունը 19-20-րդ դարերում
17. Գենդերային և ֆեմինիստական հետազոտական մոտեցումների պրակտիկ կիրառումը
18. Կանանց և գենդերային հիմնահարցերը հանրային կառավարման մեջ
19. Միջոցների հավաքագրում (ֆանդրայզինգ) և սոցիալական ձեռներեցություն
20. Հանրային առողջապահություն և կանանց իրավունքներ
21. Գենդերային զգայուն լրագրություն

2017 թվականի սեպտեմբեր ամսին մեկնարկեց լրացուցիչ կրթական դասընթացների շարքը, որի շրջանակներում անցկացվեց “Իրավական դաշտի գենդերային ուսումնասիրություններ” թեմայով կարճատև դասընթացը, որի մասնակիցներն ստացան ԵՊՀ ԳՀԱԿ վկայական, իսկ մյուս դասընթացների ընդունելությունը կշարունակվի նաև 2018 թվականին: Դասընթացների մասին առավել մանրամասն կարելի է ծանոթանալ ԱՅՍՏԵՂ

# ԺԱՄԱՆՑԱՅԻՆ ԵՎ ՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- Անցնող տարվա հոկտեմբերից ստեղծվեց կենտրոնի ֆիլմերի ակումբը, որը, չնայած իր կարճ ընթացքին, ունեցավ հետևորդների ու մասնակիցների ակտիվ խումբ: 2018 թվականի կենտրոնի ռազմավարական ուղղություններից մեկն է լինելու **Ֆիլմերի ակումբի** ընդլայնումը և զարգացումը:





# ԶԵԿՈՒՅՑՆԵՐ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐ

Հուլիսին Գենդերային հետազոտությունների և առաջնորդության կենտրոնի հյուրն էր  Մոնիկ Սվազլյան-Տալլոնը՝ ԱՄՆ-ից, ով ներկայացրեց իր հեղինակային “Leading Gracefully” (A Woman’s Guide to Confident, Authentic & Effective Leadership) գիրքը և կազմակերպվեց գրքի բարեգործական վաճառքը, իսկ ստացված հասույթը փոխանցվեց “Կանանց աջակցման կենտրոն” ՀԿ-ին:



2017 թ. մայիսի 20-ին կենտրոնի նախաձեռնությամբ՝ “Ղարաբաղի կանանց փորձառությունը քառօրյա պատերազմի ընթացքում’’ թեմայով հետազոտության: Արդյունքները ներկայացրեցին հետազոտողներ Աննա Աթոյանը և Շուշան Ղահրիյանը:





- Նոյեմբերի 3-ին կենտրոնը հրավիրել էր ԵՊՀ Սոցիոլոգիայի ֆակուլտետի շրջանավարտ, հետազոտող Շուշան Աբրահամյանին՝ ներկայացնելու “Հայ կին ֆեմինիստների կենսափորձի ֆենոմենոլոգիական վերլուծություն’’ թեմայով ուսումնասիրությունը:

Նոյեմբերի 23-ին կայացավ ‘‘Կանայք, առաջնորդություն և զարգացում’’ մագիստրոսական ծրագրի շրջանավարտներից Սյուզաննա Բոշյանի իրականացրած՝ ‘‘Սոցիալական օտարման գենդերային ասպեկտները’’ թեմայով հետազոտության արդյունքների ներկայացումը:



# ՀՅՈՒՐԵՐ ԵՎ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ



Ապրիլին Գենդերային հետազոտությունների և առաջնորդության կենտրոն այցելեց “Armenian International Women’s Association” ցանցի համահիմնադիր Բարբարա Մերգերյանը:



Մայիսի 19ին կենտրոնը հյուրընկալեց ԱՄՆ Կոնեկտիկուտի համալսարանի Սոցիալական աշխատանքի դպրոցի պրոֆեսոր Ռեբեկա Թոմասին, համալսարանի մի խումբ ուսանողներին, ինչպես նաև ԵՊՀ սոցիալական աշխատանքի դասախոս Լուսինե Քարամյանին: Վերջիններս ծանոթացան կենտրոնի գործունեությանը և իրականացրած հետազոտություններին:



Ապրիլին Գենդերային հետազոտությունների և առաջնորդության կենտրոն այցելեց “Armenian International Women’s Association” ցանցի համահիմնադիր Բարբարա Մերգերյանը:

# ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

## ՈՒՐԱԽ ԵՆՔ, ՈՐ ՄԵԶ ՀԵՏ ԵՔ։


Գենդերային հետազոտությունների և առաջնորդության կենտրոն
Երևանի պետական համալսարան
**Հեռ:** +37460710390
**Էլ.հասցե:** cgls@ysu.am
**Հասցե:** Ալեք Մանուկյան 1, 0025, Երևանի պետական համալսարան